Քաղաքացի՝ Արևիկ Պետրոսյանին
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1թղմ.,12 Շ.,2 բն.
ՀՎՀՀ՝ 20258318
ՀԾՀ՝ 6701830641

Ծանուցագիր

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն երրորդ անձի կողմից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից Երևան, Գրիբոյեդով 23/5 շենք հասցեում գտնվող անշարժ գույքը տրվել է վարձակալությամբ 2016 թ-ից: 15.05.2018թ-ին կնքված վարձակալական պայմանագրի հիման վրա մեկ տարի ժամկետով վերոնշյալ անշարժ գույքը տրամադրվել է վարձակալության Արամայիս Աշոտի Մոսինյանին ամսական 388,000 դրամ պայմանագրային արժեքով:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ: Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դուք պարտավոր էիք վարձակալական գործարքից եկամտային հարկը հաշվարկել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել 2018 և 2019 թվականների եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկներ՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի, ինչը Ձեր կողմից չի իրականացվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին կետի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի 0,075 տոկոս չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար /2020 թվականի ապրիլի 21-ից՝ 0,04 տոկոս/:

Հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ թիվ N33103/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության համաձայն՝ Ձեր չկատարված հարկային պարտավորությունը 10.08.2021թ. դրությամբ կազմել է 621.387 դրամ, որից հարկ՝ 465,600 տույժ՝ 155,787 դրամ:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու դեպքի առթիվ Դուք սույն ծանուցագիրը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին հրավիրվում եք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին՝ ք. Երևան, Ս. Դավթի 87Ա հասցեով՝ վարչական վարույթի նախնական լսումներին մասնակցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ձեր չկատարված վերը նշված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով: Ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների առաջարկում ենք եռօրյա ժամկետում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության
հարկադիր գանձման և պարտավորությունների
կատարման ապահովման բաժնի
գլխավոր մասնագետ

Digitally signed by
AVETISYAN VLADIMIR
1310560110
Date: 2021.09.17
16:15:51 AMST

Վ. Ավետիսյան

հեռ.011 549191 /9128/

16.09.2021թ.